Հովհաննես Շիրազ

Ես ծնվել եմ ձորերում

Ես ծնվել եմ ձորերում՝
Եղեռնի սև օրերում:

Մայրս կրծքին՝ օրորել՝
Իմ օրոցքն էլ է կորել:

Աչքս բացի՝ սով տեսա,
Աստված ասաց՝ "Զոհ է սա":

Դեռ փայտե ձի չհեծած՝
Բախտի ձիուց ընկա ցած:

Որբ մնացի ու անուս,
Ես դեռ մանկուց ընկա դուրս:

Վշտի վիհից, գահեր վես,
Հրաշք է, որ հասա քեզ:

Քիչ էր մնում՝ եղեռնի
Թաթն իմ կոկորդն էլ բռնի:

Բյուրերին է նա հորել՝
Ինչպե՞ս է, որ չեմ կորել:

Չեմ պղտորվել, վշտից մեծ
Սոխակս օձի չփոխվեց:

Հոգիս՝ արցունք ու ոսկի՝
Խտացվածքն եմ իմ ազգի:

Այժմ ազգին իմ անչար
Պարտք են Աստված ու աշխարհ:

Հատուցումը եղեռնի՝
Երբ էլ լինի՝ կհառնի:

Իրար գրկեն պիտի ողջ
Այս ազգերն էլ մահագոչ:

Աշխարհ, դու ինձ մի նայիր,
Իմ ողջ ազգին փայփայիր:

Վախենում եմ, թե նրան
Դու պարտք մնաս... հավիտյան: